բազում տեղիս և զեղը Յովակիմն Գեղայ-
մայ, որ կոչեցաւ Գեղարքունի։ Եւ որդւոյ
իւրոյ Միսակայ՝ որ էր անձնեայ և բարե-
տեսիլ և կորովաբան, սահման հատանէ՛ի
Յովէն մինչև՛ի գետն Երասխ ընդ դաշ-
տն Ռաջավազ, որ է երկիր Միսակայ, և
կոչեցաւ Միսեան, որ է Սիւնիք։ Յետոյ՝ի
սորա ծննդոցն՝ առ Երտաշէսիւ՝ Վ՚ա-
բաժ անուն ոմն՝ի վերայ որսոց լինի կար-
գեալ. յորմէ ասեն լինել տունն Վ՚արաժ-
նունի։

Հարմայ՝ որդի Գեղամայ։ Սա ծնանի
զԵրամ. և սակաւակեաց լեալ՝ մեռանի։

Երամ՝ որդի Հարմայի։ Սա բազում
գործ քաջութեան եղոյց պատերազմաւ.
և ընդարձակեաց զաշխարհն իւր ընդ չորս
կողմունս։ Յորոյ անունն ամենայն ազգք՝
զազգս մեր կոչեցին Երամեան (Երմէնի և
Երմէնեան)։ Զսա թագաւորն Նինոս՝ իւ-
րըն երկրորդ կոչեաց պատուելով։ Եւ

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան